## ԲԵՐԹՈՒԱԾՆԵՐ ՍԱԱԴԻԻՑ

(Շար.)

Ցավքեր սիրտ ունին սիրելու համար,
Դուր չի գալ նրանց էս ստոր աշխարհ.
Բացի սիրողի նազ նազ աչերից
Ո՞ւմ աչքում արտասունքն արիւն կը դառնար։

Օրին մէկն ասաց ինձ մի կարճատես,
Ի՞նչ ես ձէն ձգել, կուլում ինքդ քեզ.
Ասացի. էսպէս ծուխ ե՞ր քեզանից,
Երբ չունիս միջումդ վշտի բոլ ինձ պէս։

Խելօքը գիտէ, որ լացի համար
Էրւած կրծքից զատ տեղ չկայ յարմար.
Թող պատուհասուիմ քանի էս կապից
Է՛լ ազատութեան չունիմ ղեկավար։

Որ չհամբերեմ, ձեռիցս ի՞նչ կը գայ,
Երբ էն մէկից զատ սրտի դեղ չկայ,
Որ մեռցնէ էլ, խօսք ասողն ո՞վ է,
Նրանում ինչե՞ր ասես որ չկայ։

Գիտե՞ս, արտասունքս ինչի՞ է նման.
Միշտ թաւալ եկող անդկի է նման.
Աչխարհ չծնաւ խօսքի տէր մարդիկ,
Իսկ թէ ծնաւ էլ, մեր բախտից մեռան։

Դէպի եարս եմ շուռ տուել իմ հոգին.
Ասում են. Եարդդ տէր է իմ խօսքին։
Ա՛րդ, նստիմ տեղս ու լուռ, համբերատար,
Հետամուտ լինիմ գործիս անդադար։

Աւա՜ղ, որ հոգիս բերանս է եկած,
Աւա՜ղ, որ սանձս ձեռիցս է ելած.
Դեռ չի տեսնուած նիհար մարդ ինձ պէս.
Ես չեմ իմանում ողջ եմ թէ մեռած.

Ես մի թիթեռ(1) եմ ընկնող, վեր կացող,
Էրում ես, էրի՛ր, օձիքդս բա՛ց թող.
Շնորհ թէ զրկանք, ի՞նչ կ՚ուզես, արա՛։
Միայն չո՛ւտ արա, օրէ օր մի՛ թող։

Հոգուս խորքումը պատկերդ ունիմ,
Լեզումիս քաղցրը անունդդ ունիմ.
Թէ հեռանալովդ օրդս դառնացաւ,
Շաքրի տեղ անոյշ յիշատակդ ունիմ։

Գաղտնիքներդ ամէն ե՛ս գիտեմ ու ես,
Հմայքներդ ամէն ե՛ս գիտեմ ու ես.
Դարդիցդ հիւծուեցայ, ինձ օգնող չեղաւ,
Հաւատներդ ամէն ե՛ս գիտեմ ու ես։

Խելք ունեցողը սրից խոյս կը տայ,
Ինձ պէս անխելքը սրիդ զոհ կ՚երթայ,
Քանի որ քեզ մօտ հասնել չի լինում,
Քանի որ ջանքս զուր պիտի երթայ,
Ա՛րդ, նստիմ տեղս ու լուռ, համբերատար,
Հետամուտ լինիմ գործիս անդադար։

(Շարունակելի)

Թարգմ. Պարակ-
Դավրեժ

ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆՑ

(1) Խօսքը ծրագի շուրջը պտոյտ եկող գիշերային թիթեռի մասին է։

Le Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHRAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.

digitised by A.R.A.R.@